

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.053>

## Armenians in Georgia (Educational and cultural life in 1918-1920)

Babken Ghazaryan

<https://orcid.org/0009-0002-1313-5599>

YSU Faculty of History, Applicant at the Chair of History of Armenia's Neighboring Countries

[babken.ghazaryan@ysu.am](mailto:babken.ghazaryan@ysu.am)

**Keywords:** Georgia, Armenians of Georgia, Tiflis, school, political elite, independence, empire, settlement, friendship, APC, elementary school, Armenian Diocese of Armenia in Georgia, Javakhk.

*Summarizing the results of the research, let us note that the intellectuals of the Armenian nation had a goal to create national autonomous educational complexes in Georgia, which would become the cradle of the national and traditionalist generation. The Armenian-Georgian relations, especially in 1918-1919, were complicated and problematic. The December 1918 war and territorial problems also touched the agenda of the Armenians from Georgia. Finally, within 2.5 years, the Armenians were able to create national educational institutions, the management of which was an intractable issue between the Armenian National Council and the democratic-Menshevik government of Georgia.*

### Հայերը Վրաստանում (Կրթամշակութային կյանքը 1918-1920 թվականներին)

Բաբկեն Ղազարյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ

*Հիմնաբառեր*՝ Վրաստան, հայություն, Թիֆլիս, դպրոց, քաղաքական վերնախավ, անկախություն, կայսրություն, բնակավայր, բարեկամություն, ՀԱԽ, տարրական դպրոց, վիրահայոց թեմ, Ջավախք:

Վեր հանելով կատարած քննության արդյունքները, փաստենք, որ հայազգի մտավորականները նպատակ ունեին ստեղծել Վրաստանում ազգային ինքնավար կրթահամալիրներ, որոնք ազգային և ավանդապաշտ սերնդի դաստիարակության օրրան կդառնար: Իրադրությունը հայ-վրացական հարաբերություններում՝ հատկապես 1918-1919

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 53-61.



Received: 21.09.2024

Revised: 04.10.2024

Accepted: 18.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Armenians in Georgia (Educational and cultural life in 1918-1920)

Հայերը Վրաստանում (Կրթամշակութային կյանքը 1918-1920 թվականներին)

Թվականներին ուներ բարդ և խնդրահարույց բնույթ: 1918 թվականի դեկտեմբերյան պատերազմը և տարածքային խնդիրները նույնպես անդրադարձան վիրահայության կեսական նշանակության օրակարգին: Ի վերջո 2,5 տարվա ընթացքում հայերը կարողացան ստեղծել ազգային կրթարաններ, որոնց կառավարման խնդիրը անլուծելի առարկա էր Հայոց ազգային խորհրդի և Վրաստանի դեմոկրատական-մենջևիկյան կառավարության միջև:

Армяне в Грузии (Просветительская и культурная жизнь в 1918-1920 гг.)

Бабкен Казарян

Факультет истории ЕГУ, соискатель кафедры истории сопредельных с Арменией стран

**Ключевые слова:** Грузия, Армянская община, Тифлис, школа, политическая элита, независимость, империя, поселение, дружба, АПК, начальная школа, Армянская епархия, Джавахк.

*Подводя итоги исследования, констатируем факт, что интеллигенция армянского народа стремилась создать в Грузии национальные автономные образовательные комплексы, которые стали бы колыбелью национального и традиционалистского поколения. Армяно-грузинские отношения, особенно в 1918-1919 гг., были сложными и проблематичными. Декабрьская война 1918 года и территориальные проблемы коснулись и повестки дня армян в Грузии. Наконец, в течение 2,5 лет армяне смогли создать национальные учебные заведения, управление которыми было неразрешимым вопросом между Армянским национальным советом и демократически-меньшевистским правительством Грузии.*

\* \* \*

**Ներածություն:** Հայությունն ավանդաբար մեծ թիվ է կազմել թե՛ Վրաստանի մայրաքաղաքում և թե՛ գավառներում՝ ավաններում, գյուղերում, որոնց թվում կան ոչ միայն բազմաթիվ հայաշատ, այլև զուտ հայկական բնակավայրեր: Հայտնի է հայության հսկայածավալ ներդրումը Թիֆլիսի կառուցապատման, գեղեցկացման ու հզորացման գործում: Հայտնի է նաև հայազգի անվանի գործիչների՝ Վրաստանում ունեցած բարձր հեղինակության, քաղաքային կյանքի կառավարմանն ու բարեկարգմանն ուղղված նրանց անասելի ջանքերի և առհասարակ երկրի ներքին կյանքին վիրահայության ակտիվ մասնակցության մասին: Իրավամբ, հայությունը Վրաստանում նաև պետականաստեղծ դերակատարում է ունեցել:

Հետազոտության նպատակն է համակողմանի և օբյեկտիվ կերպով ուսումնասիրել վիրահայության կրթամշակութային կյանքի առանձնահատկությունը 1918-1920 թվականներին, նրանց առջև ծառայած մարտահրավերները:

Մայր հայրենիքից դուրս բնակվող վիրահայության ճակատագրում առանցքային դարձան ստեղծ հայության 1918-1920 թթ. ապրած տագնապները, որոնք իրենց տրամաբանական շարունակությունն ունեցան թե՛ խորհրդային, թե՛ հատկապես հետխորհրդային տարիներին:

Տեղի հայությունը, թեև չէր ենթարկվում բացահայտ հալածանքների, այնուամենայնիվ, հայկական ազգանունների դեմ արշավն ու դրանց փոխակերպումը վրացականի գազաթնակետին անկախության հռչակումից հետո:

Ռուսական կայսրության անկումից հետո տեղի ունեցան մի շարք ակներև իրողություններ, որոնք իրենց հետքը թողեցին վիթահայության կրթական և մշակութային կյանքում: Նախքան Վրաստանի անկախության հռչակումը, 1917 թվականի նոյեմբերին ձևավորված Անդրկովկասյան Հատուկ կոմիտեն՝ ՕԶԱԿՈՄ-ին կից ստեղծվեց հատուկ խորհուրդ, որը պետք է հոգար լուսավորության և կրթական հարցերով<sup>1</sup>:

Խորհրդի ուշադրությունը հիմնականում սևեռված էր տեղի դպրոցների ազգայնացման խնդրին, որն օրակարգային էր տվյալ ժամանակահատվածում: 1917 թվականի վերջերին Անդրկովկասում արդեն սկսվել էր տարրական դպրոցների ազգայնացումը: Քաղաքական հետագա բարդ գործընթացների հետևանքով միջնակարգ գիմնազիա կրթարանների ազգայնացումը հետաձվում էր, սակայն երեք ազգերի ներկայացուցիչների՝ վրացիների, հայերի, թուրք-թաթարների ներկայացուցիչները ունեին փոխըմբռնում, որ 1918-19 թվականներին պետք էր բոլոր կրթական հաստատությունները հասցնել ազգայնացման գործընթացին: Միջնակարգ դպրոցների ազգայնացումը ընթանում էր անշեղ խոչընդոտներով, քանի որ վրացական կողմը երևան էր բերում այն փաստարկը, որ չկան բավական չափով մայրենի լեզուն տիրապետող մանկավարժներ և վերջիններս չեն կարող ապահովել մասնագիտական որակյալ կրթություն: Հաջորդ կարևոր պատճառաբանությունը կայանում էր դասագրքերի ռուսալեզու լինելու հանգամանքով:

Վրաստանի նորաթուխ Հանրապետության կառավարության որոշմամբ 1918-19 թվականներին՝ ուսումնական անդրանիկ տարվա մենարկին որոշում կայացվեց իրականացնելու առաջնահերթ կերպով միջնակարգ պետական դպրոցների ազգայնացումը, որոնք, բաժանվեցին ըստ ուսուցման լեզվի երեք մասի՝ վրացական, հայկական և ռուսական դպրոցների [Դպրոցների ազգայնացման խնդրի շուրջը// ՀՈՐԻԶՈՆ, 4.VII.1918:]

1918 թվականի օգոստոսին Վրաստանի փոխվարչապետ Նոյ Ռամիշվիլին Հայոց Ազգային Խորհրդի(այսուհետ ՀԱԽ) գործկոմի անդամներ Ա.Երզնկյանին և Հ.Արդույանին առաջարկել էր որոշել թե որքան դպրոց է անհրաժեշտ Թիֆլիսի հայ բնակչության կրթական կարիքները ապահովելու համար [Բ. Մախյան , 2016, էջ 219:] Այս նոր իրողությունը հաշվի առնելով չաճապարեց և միայն համապատասխան հայցով դիմեց լուսավորության նախարարությանը՝ 1918 թվականի հոկտեմբերի 4-ին [Թիֆլիսի արական գիմնազիաները// ՄՇԱԿ, 28. VIII.1918]: Այդ ժամանակահատվածում կրթարանների բաժանման գործընթացը հասել էր իր ավարտին: Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում գործում էր 6 արական, համապատասխան քանակով նաև իգական գիմնազիա: Արական գիմնազիայում ուսանում էր 1600 ռուս, 1500 հայ և 900 վրաց դպրոցական: Որոշում ընդունվեց թիվ 1, թիվ 2 և թիվ 5 գիմնազիաները դարձան վրացական, իսկ թիվ 4, և թիվ 6 կրթական օջախները ինչպես նախկինում, շարունակեցին մնալ ռուսական դպրոցի կարգավիճակով: ՀԱԽ-ը,

<sup>1</sup>Այդ խորհրդի կազմի մեջ ընդգրկվեցին անդրկովկասյան երեք ազգությունների, որոնք մեծամասնություն էին կազմում և ռուսական քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները:

## Հայերը Վրաստանում (Կրթամշակութային կյանքը 1918-1920 թվականներին)

սակայն վրաց իշխանություններից ակնկալում էր ավելի շատ հայկական կրթարանները, որը չիրականացավ: Վրաց լուսավորության նախարարությունը ի պատասխան ՀԱԽ-ի դիմումի, շեշտել էր, որ կայացված որոշումը ենթակա չէ բեկման, հայկական դպրոցների թիվը մնալու է նույնը [Բ. Մախլյան, 2016, էջ 219]

Թիֆլիսի հայերի շրջանում կար մտավախություն և թերահավատություն հայկական դպրոցների նկատմամբ: Պատճառներից մեկը այն էր, հոր տեղի հայ բնակչությունը վատ էր տիրապետում հայերենին, ոմամնք նույնիսկ առհասարակ չէին տիրապետում<sup>1</sup>:

Վրաց իշխանությունները 1918 թվականի հուլիսի 26-ին թիվ 886 որոշումը հրապարակեցին, որով ազգայնացվող պետական դպրոցներում նախ պետք է ուսանեին Վրաստանի քաղաքացիություն ընդունած ծնողների երեխաները, ապա միայն ազգային այլ փոքրամասնությունների երեխաները [Դպրոցական ինդիրը Վրաստանում // ՀՈՐԻԶՈՆ, 7.VII.1918]: Լուսավորության նախարարությունն իր կազմում ներառեց հայկական պետական դպրոցների վարչություն, որտեղ մեծամասամբ աշխատում էին վրաց կամ այլազգի ներկայացուցիչներ [Բ. Մախլյան, 2016, էջ 222]: Այս իրավիճակը վեր հանելով նշենք, որ ըստ ժամանակի մամուլում գետեղված տեսակետների՝ լավ վիճակում էին գտնվում տարրական այն դպրոցները, որոնց վերահսկողությունը իրականացնում էր քաղաքային-վարչական իշխանությունները: 1919-1920 ուսումնական տարում Թիֆլիսում գործում էին 18 հայկական, 24 վրացական, 23 ռուսական, 2 թաթարական, ու ինչպես նաև գերմանական, հունական, ասորական, օսական տարրական տեսակի մեկական կրթահամալիր: Նշենք նաև, որ 1916 թվականին Թիֆլիսում գործում էր 10 հայկական, 10 վրացական և մեկական թաթարական և օսական կրթօջախներ [Բ. Մախլյան, 2016, էջ 222] Թիֆլիսի վարչության ներքո գտնվող հայկական դպրոցները ունեին իրենց առանձին տեսուչը: Ի լրումն այս ամենի, նշենք, որ շատ հաճախ վրաց իշխանությունների կեղմից իրականացվում էին ստիպողական կամայականություններ՝ օրինակ, Սդնախի հայկական՝ նախինում Մարիամյան օրիորդաց դպրոցը՝ լուսավորության նախարարարության 1918 թվականի հուլիսի 19-ի հրամանով դուրս էր բերվել տեղի հայկական կոմիտեի լիազորությունից և փոխանցվել էր քաղաքային վարչության տնօրինմանը [ՀԱԱ, ֆ.441, ց.1, գ.26, թ.4 ]: Միջնակարգ հայկական դպրոցներից գործում էին նույն աստիճան ունեցող Ներսիսյան, Հովնանյան-Անանյան, Գայանյան հանրային կրթարանները: Թիֆլիսից բացի՝ Վրաստանի այլ շրջաններում հայկական միջնակարգ հաստատություններ չկային: Որպես լուսավոր իրողություն կարող ենք նշել Թելավիում (Կախետ) հայ բարերարների կողմից հիմնված գիմնազիան [Բ. Մախլյան, 2016, էջ 222]: Որոշ ժամանակ անց դպրոց բացվեց նաև Գորի քաղաքում: 1918-1919 ուստարում հայկական երեք տարրական դպրոցներ վերաբացվեց Վրաստանի հայաշատ այլ գառաներում՝ մասնավորապես 2 դպրոց գործում էր Շուլավերում (Քվեմո-Քարթլի), Ծավկայի Ղուշչի գյուղում, որը միակն էր հայաբնակ 13 գյուղերի բնակիչների համար [Աբխազիան և ազգայնացում // ՀՈՐԻԶՈՆ, 31. VII.1918]: Ի տարբերություն վրաց

<sup>1</sup> Տե՛ս. Թիվ 3 իգական դպրոցում Ա դասարանի ծնողական ժողովում պարզվեց, որ հայերեն վարժ խոսում է 68 դպրոցականից 2-ը միայն:

քաղաքական շրջանակների վարած անզիջում վարքագծի, այլ էր իրավիճակը Աբխազիայում: Վրացական այդ երկրամասում, տեղի ժողովրդական խորհուրդը հաշվի էր առել տեղի բազմաէթնիկ խճանկարը և վարում էր տեղական դպրոցները չազգայնացնելու քաղաքականություն: Այդ մասով ընդունվեց որոշում 1918 թվականի հունիսի 25-ի՝ Նման որոշումից հետո հարցի լուծումը թողնվում էր տեղի բնակչության տեղական ժողովներին: Սուխումի շրջանային Հայոց ազգային խորհուրդը վերաբացեց նախկին ծխական դպրոցները, վերլուծելով, այն իրավիճակը, որն առաջացել էր վրաց-աբխազական մրցակցության պայմաններում: Իրադրությունը ավելի բարենպաստ էր Սոչի քաղաքում, որն այդ ժամանակ վրաց իշխանությունների ազդեցության տակ էր: Տեղի Հայոց ազգային խորհուրդը ձևավորել էր ուսուցչական խումբ և ընտրել էր իր տեսուչին: Շնորհիվ ՀԱԽ-ի գործադրած ջանքերի հիմնվեց 14 տարրական հայկական դպրոցներ: ՀԱԽ-ի մեկ այլ նախաձեռնություն էր 1918 թվականի օգոստոսի 30-ին՝ Թիֆլիսում 194 մանկավարժի մասնակցությամբ և հասարակական գործիչ Թ.Խզմալյանի ղեկավարությամբ գումարված Հայկական ուսուցչական խորհրդի ստեղծումը: 1919 թվականի դեկտեմբերի 21-ին այն անվանակոչվեց Վրաստանի հայկական դպրոցների ուսուցիչների արհեստակցական միություն: Նշեն, որ հետագայում այդ միությունը ընդգրվել էր Վրաստանի ուսուցչական միության մեջ, որպես «հայկական դպրոցների դասատուների սեկցիա» [ԱՇԽԱՏԱԻՈՐ, 24.XII.1919]:

Իրավիճակը վատթար էր առավել քան հայ եկեղեցական ծխական դպրոցներում: Դեռևս ընթանում էր աշխարհամարտը, երբ փակվեցին դպրոցներից շատերը, իսկ դասավանդվող առարկաները կրճատվեցին: Այդ դպրոցները չունեին բավական թվով տեսուչներ և ուսումնական խորհուրդներ: Այդ իրավիճակում վերջինիս հոգածության ծանր բեռը վերցրել էին հոգևորականները: 1918-1919 թվականներին այդ դպրոցները փակ էին, քանզի լի էին հայ գաղթականներով, իսկ մնացյալը գրկված էին նյութական միջոցներից [Մախյան, 2016, 231] Նշենք, որ թուրքական հարձակումներից տեղահանված ջավախքցիները երբ վերադարձան այնտեղ ևս դպրոցական կյանքը գտնվում էր անմխիթար վիճակում և մեծ մասը դպրոցների այդպես էլ չբացվեց: Վրաստանի նորակազմ ՀԱԽ-ի 1918 թվականի օգոստոսի 2-ի առաջին իսկ նիստը նվիրված էր դպրոցական խնդրին: Վերջինիս գործկումին գից ստեղծվել էին միջնակարգ և տարրական դպրոցների գործերով լիագործված բաժիններ, որոնց ղեկավար կազմում էին համապատասխանաբար՝ Երվանդ Տեր-Մինասյանը և Անուշավան Ստամբոլցյանը: 1919 թվականի աշնանը ձևավորվել էր միասնական վարչություն, որի ղեկավար էր նշանակվել Ներսիսյան դպրոցի վարժապետ Իսահակ Հարությունյանը: ՀԱԽ-ը ցանկանում էր ամբողջական վերահսկողություն ունենալ հայկական դպրոցների նկատմամբ և այդ առթիվ բանակցություններ էր վարում վրաց լուսավորության նախարարի հետ [ՀԱԱ, ֆ.441, ց.1, գ. 30, թ.19-20 շրջ]:

ՀԱԽ-ը երևան էր բերում ՕԶԱԿՈՄ-ի հայտնի որոշումը, ըստ որի ազգայնացված դպրոցներում ուսումնական ծրագրերի մշակման և իրականացման առաջնահերթ իրավունքը

<sup>1</sup> Ջավախքում կար 70 և ավել հայկական բնակավայր, իսկ հիշյալ ժամանակահատվածում ուներ միայն 10 հայալեզու դպրոց: Վերաբացված դպրոցների իրականացվելուն տեղի բնակչությունը երախտապարտ էր ՀԱԽ-ին, որովհետև վերջինս դպրոցների միակ ֆինանսավորման աղբյուրն էր: Վրաստանը ամեն կերպ ջանում էր ֆինանսավորել միայն վնասակար դպրոցները:

## Հայերը Վրաստանում (Կրթամշակութային կյանքը 1918-1920 թվականներին)

միայն ազգային մարմինների ներկայացուցիչներին էր լիազորում [Նճյարտցեղ 4.VII.1919]: Շուտով վրաց պաշտոնյաները մերժեցին այդ նախաձեռնությունը, պատճառաբանելով, որ մինչև չհատակեցվի Վրաստանում մշակութային ինքնավարության տեսակը, վերահսկման հարցն օրակարգից դուրս է հանվում<sup>1</sup>: ՀԱԽ-ը ցանկություն ուներ հետագայում մշակութային ինքնավարություն մասին օրենքի վավերացմանը հասնելուն, ինչը նրան հեռահար հնարավորություններ կտար, իրեն ենթարկելու Վրաստանում գործող բոլոր պետական դպրոցները:

Նշենք, որ ՀԱԽ-ը ի վերջո ձախողվեց Վրաստանի Հանրապետության իշխանությունների հետ վարած բազմաչարչար բանակցություններում: [Մախյան, 2016, էջ 233] ՀԱԽ-ում միակարծիք էին, որ վիրահայոց դպրոցների գործի միակ ղեկավար մարմինը վերջինս պետք է լինի: ՀԱԽ-ի ենթակայության տակ այս կամ այն կերպ հայտնվեց շուրջ 50 հայկական ժողովրդական դպրոց: Նշենք նաև, որ վիրահայության վստահության քվեն ՀԱԽ-ը չէր ստացել: Այնուամենայնիվ, իր վերահսկողության տակ կար 53 դպրոց, որից 45-ը ստորին տարրական, 5-ը բարձր տարրական, և 3-ը միջնակարգ: Ուսանում էին ընդհանուր 2235 տղա և 3271 աղջիկ: Ընդհանուր դասարանների թիվը 188 էր [Նճյարտցեղ 4.VII. 1919]:

1919 թվականի օգոստոսի 1-ին Վրաստանի ՀԱԽ-ն ընդունեց «Կանոնադրություն Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների» [Տեղական կեանք// ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ, 5.VIII.1919]:

Ըստ այդ որոշման ուսումը սկսում էր 7 տարեկանից: Ուսման տևողությունը ստորին տեսակի դպրոցում 3 ամյա էր, բարձր տարրական աստիճան ունեցող դպրոցը ունեւ 4-ամյա ծրագիր: ՀԱԽ-ը 1919-1920 ուստարուց իր տարրական դպրոցները վերածեց երկսեռերի: Միջնակարգ դպրոցներում ուսման վարձը զգալիորեն գերազանցում էր պետականը: 1919 թվականի հոկտեմբերին ՀԱԽ-ի գործկոմի կողմից որոշում ընդունվեց ուսման վարձից ազատել ժողովրդական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների երեխաներին: 1919-1920 թվականներին ՀԱԽ-ին պատկանող դպրոցներում դասավանդում էր 211 ուսուցիչ-ուսուցչուհի: Ըստ խոսակցական լեզվի՝ վիրահայերը բաժանվում էին երկու հիմնական մասի՝ հայախոս և վրացախոս: Թիֆլիսահայերի 80 տոկոսի համար մայրենի էր համարվում հայերենը, որից գրագետ էր 55.3 տոկոսը, իսկ օրինակ Վրաստանի այլ շրջաններում հայերենի՝ որպես մայրենի լեզվի տիրապետողների տեսակարար կշիռը ցածր էր՝ այսպես, Սդնախում կազմում էր 25.6 տոկոս, Գորիում 12.7 տոկոս, Թելավիում 11.5 տոկոս [Մախյան, 2016, 44]: Վրաց պաշտոնատար անձիք ասում էին, որ դեմ չեն հայերենով դասավանդմանը, իհարկե այն շրջաններում, որտեղ հայ բնակչությունը տիրապետում է լեզվին: Լուսավորության նախարար Գ. Ճումբուրիձեն ճանաչելով, որ ՀԱԽ-ը ունի Վրաստանում 49-51 դպրոց, միարժամանակ պնդում էր, թե «այդ դպրոցները շատ կասկածելի բնույթ և ուղղություն ունեն: Դրանք գլխավորապես նախկին հայոց ծխական դպրոցներն են կազմում, որոնց տիպն ուսուցման ծրագիրը ընդհանրապես

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԽ-ը վրաց իշխանություններին բողոքում և հիմնավորում էր, որ նույնիսկ ռուսական իշխանության տարիներին հայ հոգևորականությունը ուներ այդ իրավունքը, ուստի այժմ էլ այդ պարտականությունները պետք է վերականգնվի:

անընդունելի պետք է համարել դեմոկրատական հանրապետության համար» [ՄՇԱԿ, 1. X. 1920]: ՀԱԽ-ի արձագանքում Իս. Հարությունյանը, որն վարչության անդամ էր՝ նշում, «Ազգային Խորհրդի պահած դպրոցների ծրագրերը ոչ թե միայն համապատասխանում են նորագույն մանկավարժական պահանջներին, այլև հիմնված են ամենադեմոկրատական սկզբունքների վրա:

Նշենք, որ ոչ բոլոր վրացախոս հայ ծնողներն էին ցանկանում իրենց զավակներին կրթել վրացական դպրոցներում: Որպես օրինակ մատնանշենք Վելիսցիխեի (Մոնախի շրջան) դպրոցը, որը 1918 թվականին բաժանվել էր հայկական և վրացական բաժինների [ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ. 48]: ՀԱԽ-ին շատ հաճախ արգելում էին Վրաստանի գյուղական համայնքներում բացել դպրոցներ, այդ պարգայում առաջին հերթին տուժում էին վրացախոս հայերը, ովքեր հնարավորություն չունեին ուսանել մայրենի լեզուն: Վրաստանում Հայաստանի դեսպան Ա. Ջամալյանը հաստատում է, որ Վրաստանի կառավարությունը արգելում էր ունենալ ազգային հայկական դպրոցներ, նպատակ հետապնդելով ուժացնել տեղի վրացախոս հայերին:

Այսպիսով կարող ենք փաստել, որ 1920 թվականի աշնանը ՀԱԽ-ում տեղի ունեցան բուռն քննարկումներ նվիրված Վրաստանում հայկական ազգային դպրոցների ճակատագրին: Հայրենանվեր սերնդի դաստիարակության համար կարևոր է ցանկացած հայաշատ բնակավայրերում ստեղծել և պահպանել ազգային դպրոց, ապրապնդելով կապը տեղի թեմական կառույցների հետ: Վրաստանի իշխանությունները ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնավարության խնդրին անդրադառնում էին հաշվի առնելով իրենց ազգային, սեփական շահերը: Ի վերջո 1921 թվականին Վրացիեղկոմի որոշմամբ բոլոր հանրակրթական դպրոցները պետականացվեցին:

Այսպիսով, ի մի բերելով սույն հոդվածում շարադրածը, կարող ենք եզրակացնել, որ վիրահայությունը նպատակ ուներ ստեղծել երկրի ողջ տարածքում այնպիսի դպրոցներ, որտեղ հայ մանուկները կուսանեին հայագիտական առարկաներ և կստանային հայեցի դաստիարակություն: Վրաստանի իշխանությունները փորձում էին ամեն կերպ զրկել ՀԱԽ-ին վիրահայերի ազգային գործերը տնօրինելու իրավունքից: Իշխանությունները ջանում էին ենթարկեցնել նաև ինքնաբավ գործող հայկական դպրոցները: Տվյալ ժամանակահատվածում ազգային կրթարանների գոյության համար պայքարի առաջամարտիկը հայ լուսավորության նվիրյալներն էին, որոնք տաժանակիր փորձությունների արդյունքում կարողացան պայքարել, թիկունքում զգալով հայ-վրացական երկկողմ, բարդ հարաբերությունների հետևանքը:

Անդրադառնալով Վրաստանում հայերի կրթամշակութային կյանքին, ընդգծենք, որ Թիֆլիսում կային հայկական մշակութային վայրեր, որոնք գործում էին դեռևս 19-րդ դարից սկսած: Կովկասի մայրաքաղաքի համբավը վայելող Թիֆլիսում բազմաթիվ վայրեր կրում էին հայկական անվանումներ, մասնավորապես Երևանյան և Մադաթովյան հրապարակներ, Արծրունու, Շելկովնիկովի, Մելիքովի փողոցները և այլն: Գործում էր Ա. Էնֆիաջյանցի հիմնած տպարանը, որտեղ 1860-1880-ական թվականներից տպագրվել են հայ դասականների երկերը: Ախալցխայում լայն գործունեություն են ծավալել Մարտիրոսյանների և Ավետիսովների տպարանները: Թիֆլիսը նաև հայ մամուլի նշանավոր կենտրոնն էր: Մինչև 1920 թվականը

Հայերը Վրաստանում (Կրթամշակութային կյանքը 1918-1920 թվականներին)

այնտեղ հրատարակվել է 180 անուն պարբերական մամուլ, որոնցից էին <<Մշակը>>, <<Հորիզոնը>>, <<Նոր Խոսքը>>, <<Ժողովրդի Ձայնը>> և այլն: Վրաստանի մայրաքաղաքում գործել է նաև հայ գրողների ստեղծագործման այնպիսի կենտրոններ ինչպիսիք էին <<Վերնատունը>> և Հայ գրողների կովկասյան ընկերությունը:

**Եզրակացություններ:** Այսպիսով, ի մի բերելով վերոշարադրյալը, կարող ենք եզրակացնել, որ

- Վրաստանը լինելով բազմազգ պետություն հայերի նկատմամբ իրականացնում էր հավասարակշիռ, համակողմանի և հատկապես իր պետական շահերից բխող քաղաքականություն: Այսինքն լինելով հինավուրց ժողովուրդ և պետություն, վերջինիս կառավարությունը ըմբռնում էր այն իրողությունը, որ հայերը մշակութաաստեղծ են և երկու ժողովուրդների հայերի և վրացիների պատմական և մշակութային կապերը խորը դարավոր արմատներ և ավանդույթներ ունեն:
- Վիրահայությունը 1918-1920թթ. նպատակ ուներ ստեղծել երկրի ողջ տարածքում այնպիսի դպրոցներ, որտեղ հայ մանուկները կուսանեին հայագիտական առարկաներ և կստանային հայեցի դաստիարակություն:
- Վրաստանի իշխանությունները փորձում էին ամեն կերպ սահմանափակել ՀԱԽ-ին վիրահայերի ազգային գործերը տնօրինելու իրավունքից:
- Տվյալ ժամանակահատվածում ազգային կրթարանների գոյության համար պայքարի առաջամարտիկը հայ լուսավորության նվիրյալներն էին (Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Նար-Դոսր, Շիրվանզադեն և այլն), որոնք տաժանակիր փորձությունների արդյունքում կարողացան պայքարել, նպաստելով հայկական դպրոցների պահպանման ազգանվեր գործին:

**Գրականության ցանկ**

Հայաստանի Հարակից Երկրների Պատմություն, հատոր 3, Երևան 2023, 596 էջ  
**Մախյան Բ., 2016**, Ազգային հարցը և հայերը Վրաստանի Հանրապետությունում, Երևան, 279 էջ:  
**Մախյան Բ., 2006**, Հայկական դպրոցները Վրաստանի Հանրապետությունում 1918-1920թթ., Երևան:  
**Մախյան Բ., 2023**, Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի գործնեությունը 1918 թ. օգոստոս-1921թ. փետրվար Վավերագրեր և նյութեր, Երևան, 328 էջ:  
**Մելքոնյան Ա., 1999**, Ջավախք, Պատմության Ուրվագծեր, Երևան, 177 էջ:  
**Մելքոնյան Ա., 2003**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 543 էջ:  
საქართველოს ისტორია. XX საუკუნე (სახელმძღვანელო ისტორიის ფაკულტეტის სტუდენტებისთვის.) ტბილისის უნივერსიტეტის გამომცემლობა, თბილისი, 2003.  
Վրաստանի պատմություն, XX դար, ուսումնական ձեռնարկ պատմության ֆակուլտետի

ուսանողների համար, Թբիլիսիի պետական համալսարանի հրատարակչություն, Թբիլիսի, 2003:

Արխիվային նյութեր

ՀԱԱ, ֆ.441, ց.1, գ.48, թ.48;

ՀԱԱ, ֆ.441, ց.1, գ. 30, թ.19-20 շրջ.:

ՀԱԱ, ֆ.441, ց.1, գ. 43, թ.5:

ՀԱԱ, ֆ.441, ց.1, գ. 43, թ.1:

Մամուլ

ԱՇԽԱՏԱԻՈՐ, 24.XII.1919:

ՀՈՐԻՁՈՆ, 4.VII.1918:

ՀՈՐԻՁՈՆ, 7.VII.1918

ՀՈՐԻՁՈՆ, 8.VIII.1918:

ՀՈՐԻՁՈՆ, 21.VIII.1918:

ՄՇԱԿ, 28. VIII.1918

ՄՇԱԿ, 1. X.1920:

ՆՈՐ ԽՕՍՔ, 27.IX.1920:

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ, 5.VIII.1919

‘Տաքարթվելո’ Տաքարթվելոս Երօզնուլ-ճեմօ կրատիւլի շարտիս մտազարի կօմիտեթիս օրգանօ(«Մաքարթվելո»/ «Վրաստան» Վրաստանի ազգային դեմոկրատական կուսակցության գլխավոր կոմիտեի օրաթերթ, Թբիլիսի, 1918-1919.

‘Մաքարթվելոս ռուսկոբլոկա’, մտազրօբիս մօսմբե ‘Մաքարթվելոս Ռեսպուբլիկա’/ «Վրաստանի Հանրապետություն», կառավարական լրագր, Թբիլիսի, 1919